



ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱԴԻՐԱՆ

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA
№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ
№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

*Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

*Նժդեհ Երանյան. պ. գ. թ. – նախագահ,
Հայկ Նազարյան, պ. գ. թ. – պատրաստանապու քարտուղար
Արա Սանճեան, PhD (ԱՄՆ), Արսեն Բորոխյան, պ. գ. թ.,
Համլետ Պետրոսյան, պ. գ. թ., պրոֆեսոր, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, պ. գ. թ., Հռիփսիմե
Պիկիցյան, պ. գ. թ., դոցենտ, Հրաչ Զիլինկիրեան, PhD (Մեծ
Բրիտանիա), Մխիթար Գաբրիելյան, պ. գ. թ., դոցենտ,
Պավել Ավետիսյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ռոբերտո Դան, PhD (Իտալիա), Ռուբեն Վարդանյան, պ. գ. թ.,
Տորք Դալայան, թ. գ. թ.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անասրիդա Ս. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկայթի դարի մշակույթում.
Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.)

8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բադայան

ՀԿ(Բ)Կ կենտրոնի նախագահության և քարտուղարության որոշումները
ԱՄԴԻՏՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.)

20

Սեդա Գալսարյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը
1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի)

43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության
որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.)

66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը
Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.)

78

ԱՉԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասարյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ
վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաագագրական ակնարկ)

104

Լիլիա Ավանեսյան

Մ. Գ. Իսակի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը
և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.)

124

Միսիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում
(առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն)

138

Աստղիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.)

150

Քարոշ Մալխասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.)

173

Հասմիկ Պերրոյան

Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռուզաննա Ծարուրյան

Չարենցի հուշարահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան

Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմաձագի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան

Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՅԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավերիսյան

Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՅԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան

Եվգենյա Գյուգալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

263

Արմեն Բաղայան
Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
armbad@mail.ru

ՅԿ(Ք)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԱՄԴԻՅ ԵՎ ԽՅՐՄ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ (1921–1922 ԹԹ.)*

Հիմնաբառեր. ՀԿ(Ք)Կ Կենտկոմ, նախագահություն և քարտուղարություն, Անդր-դաշնություն, ԽՍՀՄ, նիստերի արձանագրություններ, որոշումներ, քաղվածքներ:

Ներածություն

Անդրդաշնության և ԽՍՀՄ ձևավորման պատմության մասին ինչպես ԽՍՀՄ տարիներին, այնպես էլ՝ հետխորհրդային տարիներին մասնագետների կողմից գրվել են բազմաթիվ աշխատություններ, որոնք հարցը լուսաբանել են գրեթե բոլոր կողմերից:

Այդուհանդերձ, չնայած վերոնշյալին, ուսումնասիրվող հարցի վերաբերյալ մինչ օրս չեն հրապարակվել ՀԿ(Ք)Կ Կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները, առանց որոնց ուսումնասիրության ՀԿ(Ք)Կ քաղաքական պատմության ներկայացումը կլինի թերի և ոչ լիարժեք:

ՅԿ(Ք)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ և քարտուղարության որոշումները

Հայաստանի Հանրապետությունը խորհրդային պետություն հռչակելու մասին Հայիեղկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի հռչակագիրը միաժամանակ ծրագրային փաստաթուղթ էր նոր իշխանության ներքին և արտաքին քաղաքականության մասին: Այնտեղ այլ հարցերի թվում շեշտվում էր, որ խորհրդային իշխանության շնորհիվ ընդմիջտ կվերանան վիճելի հարցերը Ադրբեջանի հետ: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին, «Բոլորին, բոլորին, բոլորին» ուղղված դիմումը ստորագրած Հայիեղկոմի անդամները Խորհրդային Հայաստանը տեսնում էին խորհրդային մյուս հանրապետությունների հետ միավորված՝ մեկ ընտանիքում (Ղազախեցյան 2006, 11):

Բնականաբար, միավորմանը կողմնակից էր նաև Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը, որն այդ հարցը քննարկեց 1921 թ. մարտի 8-ից 10-ը՝ ՌԿ(Ք)Կ 10-րդ համագումարում: Ազգային հարցի վերաբերյալ ընդունված բանաձևում արձանագրվեց խորհրդային հանրապետությունների անջատ գոյության աննպա-

* Ստացվել է 21.03.2023 թ., ուղարկվել է գրախոսման 23.03.2023 թ., ընդունվել է տպագրության 07.07.2023 թ.:

տակահարմարությունը և դրանց՝ պետական միավորման անհրաժեշտությունը, որի լավագույն ձև հանդիսանալու էր խորհրդային դաշնությունը (Հայոց պատմություն 2010, 402):

Խորհրդային հանրապետությունների միջև ձևավորվող փոխհարաբերությունները կարգավորվում էին կուսակցական կառույցների միջոցով: Ինչպես Հայկումկուսը, այնպես էլ՝ Խորհրդային Վրաստանի ու Խորհրդային Ադրբեջանի կուկուսները հանդիսանում էին ՌԿ(բ)Կ՝ մարզային կարգավիճակ ունեցող տարածքային կազմակերպություններ և 1921 թ. մարտի 21-ին ստեղծված ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի միջոցով ենթարկվում էին նույն Կենտկոմին: Հենց կովկասյան բյուրոն էր ղեկավարում Անդրկովկասի հանրապետությունների միջև ընթացող ինտեգրացիոն գործընթացը, որի առաջին քայլերը տնտեսական միություն ստեղծելն էր: Սույն փաստը արտացոլվեց 1921 թ. ապրիլի 9-ին կովկասյան բյուրոյի փաստացի ղեկավար Սերգո Օրջոնիկիձեի ուղղված Խորհրդային Ռուսաստանի ղեկավար Վլադիմիր Լենինի հեռագրում, ուր վերջինս պահանջում էր Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական մարմին, իսկ մի քանի օր անց էլ՝ ապրիլի 14-ին, Կովկասի կոմունիստներին ուղղված ծրագրային բնույթ կրող նամակում առաջ էր քաշում խորհրդային հանրապետությունների միջև դաշինք կնքելու գաղափարը (Լենին 1982, 237–240):

1921 թ. Խորհրդային Վրաստանը, Խորհրդային Ադրբեջանը Խորհրդային Հայաստանը շարունակում էին վարել իրարից մեկուսի տնտեսական քաղաքականություն, իրականացնել տարանջատ ֆինանսատնտեսական ու դրամավարկային քաղաքականություն, որից երեքն էլ տուժում էին (Хармандарян 1969, 198–199): Այսպիսով, Անդրկովկասի հանրապետությունների միջև ընթացող ինտեգրացիոն գործընթացը մեկնարկեց նրանց երկաթուղիների միավորման քայլով, քանզի երկաթգիծը միակ հանգույցն էր, որ իրականում կապում էր հանրապետություններին միմյանց, ինչպես նաև՝ խորհրդային Ռուսաստանի հետ:

Երկաթուղու և արտաքին առևտրի միավորման հարցերը քննարկվեցին 1921 թ. ապրիլի 6–7-ը Թիֆլիսում կայացած տնտեսական խորհրդակցությունում և ապրիլի 9-ին՝ Ադրկումկուսի կոմկուսի կենտկոմի պլենումում: Մի քանի օր անց՝ ապրիլի 14-ին, Բաքվում կայացած տնտեսական խորհրդակցության ժամանակ համաձայնեցվեց երկաթուղու միավորման հարցը և, երկու օր անց՝ ապրիլի 16-ին, Թիֆլիսում Խորհրդային Հայաստանը, Խորհրդային Վրաստանը, Խորհրդային Ադրբեջանը և Խորհրդային Ռուսաստանը պայմանագիր ստորագրեցին Անդրկովկասի երկաթուղիները միավորելու և տվյալ բնագավառում Խորհրդային Ռուսաստանի օգնության մասին (տես Образование СССР 1972, 198–199):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանում նոր էր ավարտվել քաղաքացիական պատերազմը և Հայկումկուսն էլ նոր էր վերականգնում իր կառույցները ողջ երկրում, վերջինս Անդրկովկասյան հանրապետությունների ինտեգրացիոն գործընթացը քննարկման առարկա դարձրեց միայն մայիս ամսից:

1921–1922 թթ. ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը և քարտուղարությունը վերոնշյալ հարցերը քննարկել են ընդհանուր առմամբ մոտ 40 նիստում: Քննարկ-

ված հարցերը վերաբերել են վերոնշյալ հարցերի ինչպես կազմակերպչական, այնպես էլ՝ այդ միավորումները համապատասխան կադրերով համալրելու խնդիրներին:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը, առաջին անգամ 1921 թ. մայիսի 12-ի նիստում է քննարկել ինտեգրացիոն գործընթացի հարցը, երբ, լսելով ՌԿ(բ)Կ համառոտաաստանյան կոնֆերանսի հարցը, որոշել է Սարգիս Կասյանին պատվիրակել մասնակցելու այդ հավաքին՝ միաժամանակ տեղեկացնելով Խորհրդային Ռուսաստանում Խորհրդային Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանին, որ Ս. Կասյանի բացակայության դեպքում, ինքն է լիազորվում ներկայացնել ՀԿ(բ)Կ: Նույն որոշման 10-րդ կետով վերջինս միաժամանակ լիազորված էր ժողտնտխորհի համառոտաաստանյան կոնֆերանսին ներկայացնելու Խորհրդային Հայաստանի ժողտնտխորհը (Հայաստանի ազգային արխիվ, այտուհետև՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 4 և շրջ.), իսկ մի քանի օր անց, մայիսի 28-ին, նախագահությունը լիազորեց ԺԿԽ-ի նախագահ Ալեքսանդր Սյաննիկյանին կովկասյան բյուրոյի մոտակա միստում, այլ հարցերի թվում, օրակարգ ընդգրկել և պաշտպանել Խորհրդային Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը Անդրկովկասյան հանրապետությունների միջև գոյություն ունեցող մաքսատները վերացնելու և տնտեսական միավորման հարցերի վերաբերյալ (ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 12):

Մաքսատների վերացման վերաբերյալ ընդունված որոշումները համընթաց էին Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև այդ պահին ընթացող գործընթացին, այն է՝ արտաքին առևտրի միավորմանը, որը տեղի ունեցավ 1921 թ. հունիսի 2-ին, երբ Բաքվում, երեք երկրների կողմից ստորագրված համաձայնագրով արտաքին առևտրի մարմինները միավորվեցին և ստեղծվեց արտաքին առևտրի միացյալ կոլեգիա: Վերջինս սկսեց ձևավորել իր ներկայացուցչությունները տարբեր երկրներում, այդ թվում Պարսկաստանում: Մույն երկրում նշյալ ներկայացուցչության հարցը քննարկման առարկա դարձավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1921 թ. հուլիսի 19-ի նիստում, որտեղ մասնավորապես քննարկվեց պարենի և առևտրի ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանի արարքը: Վերջինս, առանց ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության գիտության, վերացրել էր Պարսկաստանում ՀՄԽՀ արտաքին առևտրի ներկայացուցչությունը և ՀՄԽՀ ներկայացուցչին ընդգրկել Խորհրդային Ռուսաստանի միացյալ արտաքին առևտրի մարմնի կազմում: ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը, կանգնած լինելով կատարված փաստի առջև, ստիպված ընդունեց այդ նշանակումը, իհարկե, Ասքանազ Մոսվյանին հանձնարարելով այդ հարցի կապակցությամբ պարզաբանումներ պահանջել Ալ. Բեկզադյանից (ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 30-33): Ինչպես տեսնում ենք, ՀԿ(բ)Կ Կենտկոմին առավելապես հետաքրքրում էր հարցի այն կողմը, որ նշյալ գործողությունը կատարվել է առանց Կենտկոմի գիտության, և ոչ թե այն հանգամանքը, որ կատարվածի արդյունքում ՀՄԽՀ-ն զրկվել էր իր ինքնիշխանության մի գործիքից: Հարցի կապակցությամբ ավելացնենք, որ Ալ. Բեկզադյանը չպատժվեց, իսկ Կենտկոմի նախագահությունը նույն որոշմամբ դիմեց Պարսկաստանում գործող առևտրի միացյալ մարմնի ներ-

կայացուցչությանը՝ առաջարկելով տվյալ երկրում հետայսու առևտուր անելիս առաջնորդվել ՀՄԽՀ առևտրատնտեսական շահերով:

Վերադառնալով երկաթուղիների միավորման խնդրին, նշենք, որ 1921 թ. սույն հարցը քննարկման հարց դարձավ ևս մեկ նիստում: Մասնավորապես, 1921 թ. օգոստոսի 2-ին, երբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը որոշեց երկաթուղիների միավորման հարցը քննարկել Անդրկովկասի հանրապետությունների տնտեսական խորհրդակցության առաջիկա նիստում (ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 51), որը կայացավ Թիֆլիսում 1921 թ. օգոստոսի 7-ից 10-ը և սահմանեց երեք հանրապետությունների առաջիկա տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները: Այս քննարկումը, սակայն, ընդամենը հստակեցնելու էր միավորման գործընթացի որոշ հարցեր, քանզի ռազմավարական հարցը արդեն լուծված էր:

Անդրկովկասի տնտեսական միավորման գործընթացը չէր կարող ընթանալ առանց տնտեսական ղեկավար մարմնի ստեղծման: Այս խնդիրը լուծվեց Թիֆլիսում 1921 թ. օգոստոսի 12-ից 14-ը կայացած կովկասյան երկրամասային կուսակցական առաջին խորհրդակցության ժամանակ, երբ ստեղծվեց անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական բյուրոն: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության որոշմամբ, նույն ամսվա 26-ին, Տնտեսական բյուրոյում ՀՄԽՀ ներկայացուցիչ նշանակվեց Ալ. Բեկզադյանը (ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 69):

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1921 թ. ընթացքում տնտեսական այլ հարցեր այլևս չքննարկեց: Քննարկված հարցերի երկրորդ խումբը վերաբերում էր Անդրդաշնության կազմավորմանը:

Վերոնշյալ խնդրին էր նաև վերաբերում 1921 թ. նոյեմբերի 3-ին Բաքվում կայացած ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումը, որին մասնակցում էր նաև ՌԿ(Բ)Կ Կենտկոմի անդամ Վյաչեսլավ Մոլոտովը: Ալ. Մյանսիկյանին Շավա Էլիավայի նախապատրաստած և պլենումի ընդունած «Անդրկովկասյան հանրապետությունների դաշնության մասին» բանաձևով և որոշմամբ անհրաժեշտ էր համարվում անդրկովկասյան հանրապետությունների միջև ռազմաքաղաքական, ֆինանսատնտեսական և արտաքին քաղաքականության ոլորտների միավորման դաշնային միութենական պայմանագրի ստորագրումը և Միութենական խորհրդի ստեղծումը:

Կովկասյան բյուրոյի նշյալ պլենումի վերաբերյալ 1921 թ. նոյեմբերի 14-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության նիստում զեկուցումով հանդես եկավ Ալ. Մյանսիկյանը: Նախագահության որոշմամբ զեկույցը ընդունվեց ի գիտություն: Նույն որոշմամբ վերջինս հավանության արժանացրեց կովկասյան բյուրոյի պլենումի բոլոր որոշումները: Միաժամանակ, նախագահությունը ցանկություն հայտնեց, որպեսզի Անդրկովկասի հանրապետությունների դաշնությունը իր կազմում ընդգրկի նաև Կովկասի ինքնավար հանրապետությունները, մասնավորապես՝ Դաղստանը, Լեռնային Հանրապետությունը, Աբխազիան, Նախիջևանի երկրամասը և այլն: Կովկասյան հանրապետությունների դաշնային ձևի (սահմանադրության) որոշման հանձնաժողովի անդամ նշանակվեց Սարգիս Լուկաշինը (ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 99):

Այս ընթացքում ինտեգրացիոն գործընթացի թափանիվը պտտվում էր մեծ արագությամբ: 1921 թ. դեկտեմբերի 7-ին կայացավ Անդրկովկասի առաջին կուսակցական համաժողովը, որը պատմագիտության մեջ անվանվում է Անդրկովկասի երկրամասային երկրորդ խորհրդակցություն: Մասնակցում էին Կովկասյան բյուրոյի անդամները, ԱդրԿ(բ)Կ-ից 17 պատվիրակ, ՀԿ(բ)Կ-ից՝ 11, ՎԿ(բ)Կ-ից՝ 16, ԱբխԿ(բ)Կ-ից՝ 3, Երիտկոմմիության Կովկասյան բյուրոյից՝ 14, ինչպես նաև՝ պատվիրակներ Անդրարհմիությունից, Կարմիր բանակից և Համառուսաստանյան արհմիությունների կենտրոնական խորհրդից: Համաժողովին ելույթ ունենալով, Ս. Օրջոնիկիձեն ներկայացրեց Անդրդաշնության ձևավորման գործընթացը: Նշենք, որ ելույթը կրում էր գուտ տեղեկատվական բնույթ և քննարկումներ նախատեսված չէին (Хармандарян 1969, 210):

Ինտեգրացիոն գործընթացի հաջորդ քայլերը վերաբերում էին ռազմական և արտաքին քաղաքականության ոլորտների միավորմանը:

Ռազմական ոլորտին էր վերաբերում 1921 թ. դեկտեմբերի 8-ին Թիֆլիսում ստորագրված «Համաձայնագիր Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների կառավարությունների և ՌՍԴԽՀ կառավարության միջև՝ ռազմածովային հարցերի վերաբերյալ» փաստաթուղթը (ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գ. 3, թ. 129): Ըստ համաձայնագրի՝ Անդրկովկասի երեք հանրապետությունների և Խորհրդային Ռուսաստանի զինված ուժերը միավորվում էին մեկ միասնական հրամանատարության ներքո՝ ի դեմս առանձին կովկասյան բանակի ռազմեղխորհրդի:

Կարճ ժամանակ անց ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն որոշեց միութենական արտասահմանյան ներկայացուցչությունները ենթարկեցնել Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչություններին: ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը նշյալ որոշումը 1921 թ. դեկտեմբերի 13-ին ընդունեց ի գիտություն (ՀԱԱ, ֆ. 1, գ. 1, գ. 40, թ. 107):

Այս ընթացքում արտասահմանյան մամուլը սկսել էր արձագանքել Անդրկովկասի հանրապետությունների միավորիչ շարժմանը, գտնելով, որ այդ միավորման մեջ Խորհրդային Հայաստանը լրիվ կկորցնի իր ունեցած ոչ լիարժեք անկախությունը: ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը չէր կարող անտեսել այս հանգամանաքը, ուստի, դեկտեմբերի 13-ի իր նիստում, լսելով Ս. Լուկաշինի հաղորդումը Անդրկովկասյան կուսակցական խորհրդակցության մասին հարցը, հանձնարարեց մամուլի օրգաններին լուսաբանել դաշնության գաղափարը, ինչպես նաև քննադատել դաշնակցական, մենշևիկյան և արտասահմանյան այլ լրատվամիջոցների «հակակեղծարար» հոդվածները Անդրդաշնության վերաբերյալ: Նույն որոշման 6-րդ կետով արհեստակցական միությունների համառուսաստանյան կենտրոնական խորհրդի կովկասյան բյուրոյում Խորհրդային Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի ներկայացուցիչ առաջադրեց վերջինիս նախագահ՝ Խաչիկին (ՀԱԱ, ֆ. 1, գ. 1, գ. 40, թ. 109): Սա 1921 թ. վերջին որոշումն էր, երբ նախագահությունը քննարկում էր Անդրդաշնության կազմավորման խնդիրները:

Ինչ վերաբերում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությանը, ապա վերջինս 1921 թ. հարցին անդրադարձավ չորս անգամ, որոնցից երեքը վերաբերում էին կաղրային խնդիրներին, այն էլ՝ այդ խնդիրները ոչ թե քարտուղարությունն էր լու-

ծում, այլ՝ փոխանցվում էին կամ ժողտնտխորհին կամ նախագահությանը (ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 44, թ. 17, 40, 43):

Անդրդաշնության կազմավորման նախապատրաստական աշխատանքների ուղղությամբ Խորհրդային Հայաստանում կատարվող հաջորդ քայլերը հանդիսացան Հայկոմկուսի և խորհուրդների առաջին համագումարները, առավել ևս, որ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1921 թ. նոյեմբերի 29-ին միաձայն ընդունել էր բանաձև, որի կետերից մեկն այն էր, որ դաշնության հարցը պետք է լուծվեր հանրապետությունների խորհուրդների համագումարների միջոցով:

1922 թ. հունվարի 16-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը հաստատեց կոմկուսի և խորհուրդների համագումարների օրակարգերը, որոնց համապատասխանաբար դ և ե կետերով քննարկվելու էին Անդրդաշնության մասին հարցերը: ՀԿ(Բ)Կ համագումարում հարցը ներկայացնելու էր Ալ. Մյասնիկյանը, իսկ խորհուրդների համագումարում՝ Ա. Մոավյանը (ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 1):

Ինչպես ՀԿ(Բ)Կ առաջին, այնպես էլ՝ խորհուրդների համագումարը պաշտպանեցին Անդրդաշնության գաղափարը:

Անդրկովկասյան հանրապետությունների կոմկուսների համագումարների արդյունքները հանրագումարի բերեց Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1922 թ. փետրվարի 18–22-ը: Համագումարը լուծարեց ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոն և ստեղծեց Անդրկովկասյան երկրամասային կոմիտեն: Համագումարը նաև հաստատեց միութենական պայմանագրի և բարձրագույն տնտեսական խորհրդի մասին դրույթները: 1922 թ. փետրվարի 23-ին հրավիրված Անդրերկկոմի առաջին իսկ նիստում որոշվեց գումարել երեք հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեների ներկայացուցիչների լիազորված կոնֆերանս: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության նիստում Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարի և ԿԳԿ-ի կայանալիք նիստերի մասին զեկուցմամբ հանդես եկավ Ալ. Մյասնիկյանը: Նշենք, որ զեկուցումը հնչեցվեց փակ դռների ետևում և ընդունվեց ի գիտություն (ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 6):

1922 թ. մարտի 11–12-ին Թիֆլիսում գումարվեց Խորհրդային Վրաստանի, Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի Կենտգործկոմների լիազորների կոնֆերանս, որը ճանաչվեց Անդրկովկասի բարձրագույն իշխանություն: Կազմակերպվեց գործադիր մարմին՝ Միութենական խորհուրդ, վերջինիս նախագահությունը (յուրաքանչյուր հանրապետությունից մեկ ներկայացուցիչ) և տնտեսական ղեկավար մարմին՝ Բարձրագույն տնտեսական խորհուրդ: Մարտի 12-ին կոնֆերանսն ընդունեց Անդրկովկասի Դաշնային խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման մասին Միութենական պայմանագիրը (Ղազախեցյան 2006, 237):

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը դեռևս մարտի 7-ին վերոնշյալ Միութենական խորհրդի նախագահության անդամ էր առաջադրել Ալ. Մյասնիկյանին (ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 7):

Ավարտելով ձևավորման գործընթացը՝ Միութենական խորհուրդը սկսեց Անդրկովկասի մասշտաբով միավորել հանրապետությունների ժողկոմատները,

մասնավորապես՝ ֆինանսների, աշխատանքի, արտաքին գործերի, արտաքին առևտրի, բանվորա-գյուղացիական տեսչության և այլն: Իսկ նշյալ ժողկոմատներին և միութենական այլ կառույցներին անհրաժեշտ էին ղեկավար կադրեր, որոնց էլ, հետագա մի քանի ամիսների ընթացքում, իր որոշումներով նշանակում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը: Այսպես օրինակ. 1) 1922 թ. մարտի 29-ին Ա. Մոավյանը որպես ՀՄԽՀ ներկայացուցիչ նշանակվեց Անդրկովկասի արտակարգ տեսչական հանձնաժողովում, 2) մայիսի 6-ին Ս. Փիրումյանը՝ արտաքին առևտրի ժողկոմատի կոլեգիայի անդամ, 3) հունիսի 16-ին Հ. Սուրվաթյանը՝ Միութենական խորհրդին առընթեր արտաքին հարաբերությունների խորհրդի անդամ, իսկ Ռ. Ոսկանովը՝ Անդրկովկասյան միության տնտեսական խորհրդակցության անդամ Թուրքեստանում և այլն (ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 34):

Կադրային նշանակումներին զուգընթաց, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը նշյալ ժամանակահատվածում ամրապնդեց ինտեգրացիոն իր կապերը ոչ միայն հարևան հանրապետությունների, այլև՝ Խորհրդային Ռուսաստանի հետ: 1922 թ. օգոստոսի 12-ի նիստում, լսելով Խորհրդային Ռուսաստանի սոցապժողկոմատի ներկայացուցչի զեկուցումը այն մասին, որ իրենց երկրում սոցիալական ապահովության բոլոր կառույցները միավորել են մեկ մարմնում, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը որոշեց նույնը իրականացնել Խորհրդային Հայաստանում (ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 50):

Մի քանի օր անց, օգոստոսի 18-ին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը, լսելով Թուրքիայում և Պարսկաստանում դիվանագիտական ներկայացուցչության մասին հարցը, որոշեց այդ երկրներում ունենալ Անդրդաշնության միության ընդհանուր ներկայացուցչություն, որտեղ Անդրկովկասի հանրապետությունները սեփական ներկայացուցիչ կարող էին ունենալ միայն խորհրդականի կարգավիճակով (ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 55):

1922 թ. երկրորդ կեսից ՌԿ(բ)Կ ղեկավարությունը գործնական քայլեր ձեռնարկեց ավարտին հասցնելու համար Խորհրդային Ռուսաստանի և խորհրդային մյուս հանրապետությունների հետ միջպետական փոխհարաբերությունների կարգավորման գործընթացը: Իր հերթին, 1922 թ. սեպտեմբերի 10-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը պաշտպանեց Խորհրդային Ռուսաստանի հետ Անդրդաշնության միության քաղաքական տնտեսական սերտ միավորման գաղափարը (ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 26):

Չմանրամասնելով այս ընթացքում ԽՍՀՄ կազմավորման վերաբերյալ Խորհրդային Ռուսաստանի ԺԿԽ-ի ղեկավար Վլ. Լենինի և ազգությունների ժողկոմ Ի. Ստալինի դիրքորոշումների տարբերությունը, նշենք, որ 1922 թ. հոկտեմբերի 6-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը ընդունեց բանաձև, որը հրամայական էր համարում Խորհրդային Ռուսաստանի, Խորհրդային Ուկրաինայի, Խորհրդային Բելոռուսիայի և Անդրդաշնության միության միջև «Սոցիալիստական խորհրդային Հանրապետությունների Միություն» կազմում միավորվելու մասին պայմանագրի ստորագրումը: Պլենումը հանձնարարում է Իոսիֆ Ստալինի նախագահությամբ գործող հանձնաժողովին նախապատրաստել ԽՍՀՄ կազմավորման մասին օրենքի նախագիծ՝ այն խորհուրդների համագումարի միջոցով ընդունելու համար (ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 177, թ. 75):

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1922 թ. հոկտեմբերի 14-ին, լսելով խորհրդային հանրապետությունների միության և դաշնության մասին Ա. Մյասնիկյանի զեկուցումը, այն ընդունեց ի գիտություն և որոշեց դաշնության մասին հարցը քննարկել ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջիկա պլենումում (տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 70):

Քանի որ ՌԿ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերի 6-ի պլենումի որոշմամբ ԽՍՀՄ կազմավորման մասին հարցը պետք է ընդունեին հանրապետությունների խորհուրդների համագումարները, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1922 թ. նոյեմբերի 29-ին, լսելով ԽՍՀՄ-ի և Անդրդաշնության հանրապետության կազմավորման մասին հարցը, հաստատեց ՀՍԽՀ համագումարի օրակարգը, որը վերաբերում էր հենց խորհրդային հանրապետությունների միության կազմավորման հարցին: Սույն հարցի վերաբերյալ համապատասխան զեկուցմամբ հանդես էր գալու Ա. Մոսվյանը (ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 75): Նշենք որ ընդունված որոշումը վերջինս էր 1922 թ. ընթացքում, երբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը քննարկման հարց դարձրեց ԽՍՀՄ-ի և Անդրդաշնության հանրապետության կազմավորման գործընթացը:

Ինչ վերաբերում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությանը, ապա այն, 1922 թ. ընթացքում Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորման հարցերի քննարկումների ժամանակ միայն կադրային նշանակումների խնդիրներ էր լուծում, բոլոր էական նշանակություն ունեցող հարցերը հասցեագրելով Կենտկոմի նախագահությանը:

Որպես ելույթի վերջաբան նշենք, որ 1922 թ. դեկտեմբերի 10–13-ը Բաքվում հրավիրված Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Դաշնային Միությունը վերափոխեց Անդրկովկասի Սոցիալիստական Դաշնային Հանրապետության, ընդունեց նրա սահմանադրությունը և որոշեց միավորվել Խորհրդային Ռուսաստանի, Խորհրդային Ուկրաինայի և Խորհրդային Բելոռուսիայի հետ՝ ԽՍՀՄ կազմում: Նույն ամսվա 29-ին խորհրդային չորս հանրապետությունների պատվիրակությունների կոնֆերանսը հաստատեց ԽՍՀՄ կազմավորման մասին հռչակագրի և միութենական պայմանագրի նախագծերը: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին, նշյալ հանրապետությունների ներկայացուցիչները կնքեցին վերոհիշյալ նախագծերը, որոնք և հաստատվեցին նույն օրը հրավիրված ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարում:

Այսպիսով, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը և քարտուղարությունը Անդրդաշնության և ԽՍՀՄ ձևավորման ընթացքում չցուցաբերեցին ազգային շահերի պաշտպանությունից բխող յուրահատուկ քաղաքականություն: Նրանք մշտապես հանդիսացան վերադասի որոշումները ընդամենը դակող մի կառույց:

Հավելվածում հրապարակվող փաստաթղթերը, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխիվի համար 1 ֆոնդում, տպագրվում են առաջին անգամ՝ քննարկի հավատարիմ, ուղղագրական ու կետադրական մասնակի շտկումներով և ոճի պահպանմամբ: Նպատակ ունենալով ներկայացնել ՀԿ(բ)Կ Կենտկոմի ամբողջական քաղաքականությունը Անդրդաշնության և ԽՍՀՄ ձևավորման վերաբերյալ՝ հրապարակել ենք թեմային վերաբերող փաստաթղթային ողջ հա-

վաքածուն, անգամ եթե փաստաթղթերը մասնակի են առնչվել բուն թեմային: Ներկայացվող փաստաթղթերը բաժանել ենք երկու մասի, որոնցից առաջինում հրապարակել ենք ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության որոշումները, իսկ երկրորդում՝ քարտուղարության:

Հրապարակվող փաստաթղթերից քաղվածքաբար ներկայացրել ենք փաստաթղթերի միայն այն կետերը կամ ենթակետեր, որոնք վերաբերել են թեմային, իսկ երբ խոսքը վերաբերել է թեմային չառնչվող հարցերին, կատարել ենք կրճատումներ, որպիսիք չեն աղավաղում հավաքածուի բովանդակությունը: Կրճատումները նշվել են բազմակետերով: Տողատակում կատարել ենք որոշակի ծանոթագրություններ:

Հավելված

ՄԱՍ I

№ 1

ВЫПИСКА ИЗ ПРОТОКОЛА № 1 ЗАСЕДАНИЯ ЦК КПА

12. 05. 1921 г.

Ереван

Слушали

3. О всероссийской конференции Р. К. П.

Постановили

3. Делегировать т. Касьяна¹, но одновременно сообщить тов. С. Тер-Габриеляну², что в случае не присутствия т. Касьяна – уполномочивает его быть представителем К. П. А.

Слушали

10. О всероссийской конференции совнархозов³.

Постановили

10. Уполномочить т. С. Тер-Габриеляна.

Секретарь Г. Азатьян⁴

НАА, ф. 1, оп. 1, д. 40, л. 4 и об. Подлинник. Машинопись.

1 Սարգիս Հովհաննեսի Կասյան (իսկական անունը՝ Քոսյան, 28.01.1876–1937): Խորհրդային Հայաստանի կուսակցական և պետական գործիչ, եղել է Բաքվում ձևավորված Հայիեղկոմի նախագահը: Իր ստորագրությամբ հրապարակվեց Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու վերաբերյալ պատմական հռչակագիրը: Ջրաղեցրել է տարբեր պաշտոններ Խորհրդային Հայաստանում և Անդրդաշնությունում: Բռնադատվել է 1937 թ.:

2 Սահակ Միրզայի Տեր-Գաբրիելյան (27.02.1886–1937): 1920 թ. սեպտեմբերին նշանակվել է ՌԿ(Բ)Կ կենտկոմի անդամ, նոյեմբերին՝ Հայաստանում խորհրդային հանրապետության հռչակող հեղկոմի անդամ: 1920 թ. վերջից եղել է ՀՄԽՀ լիազոր ներկայացուցիչը Մոսկվայում, 1928–1935 թթ. Ս. Տեր-Գաբրիելյանը ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահն էր, միաժամանակ՝ ԱՍԴԻ ՀԺԿԻ-ի նախագահի տեղակալը: Կյանքի վերջին տարիներին աշխատել է ԽՍՀՄ թեթև արդյունաբերության ժողկոմատում: Բռնադատվել է 1937 թ.:

3 Ժողովրդական տնտեսության խորհուրդ: Գործել է 1917–1932 թթ. և 1957–1965 թթ.: Նպատակ են ունեցել ա) շրջանի ընդհանուր տնտեսական սկզբունքային հարցերի լուծում, բ) տնտեսական շրջանների վառելիքահումքային, բանվորական ուժի և այլ խնդիրների պարզաբանում, գ) տնտեսական պատվերների բաշխման ծրագրերի կազմում և այլն:

4 Հայկ Նահապետի Ագաոյան (25.09.1881–13.11.1964): ՀԽՍՀ պետական, կուսակցական և արհմիութենական գործիչ, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի անդամ: Ընտրվել է 1921-ի փետրվարի 6-ին, Երևանում, արհմիութենական առաջին կոնֆերանսում ստեղծված Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի (ՀԱՄԽ) առաջին նախագահ:

№ 2
ВЫПИСКА ИЗ ПРОТОКОЛА № 5
ЗАСЕДАНИЯ ЦК КПА

28. 05. 1921 г.
Ереван

Слушали

2. О вопросах, подлежащих внесению и разрешению на заседании Кавбюро – делает доклад тов. Лукашин⁵. – 1) О Зангезуре, 2) О границах трёх республик, 3) Об экспедиции заготовлении денежных знаков, 4) О взаимоотношениях с Нахкраем, 5) О снятии таможен, 6) О формах экономического объединения

Постановили

2. Поручить тов. Мясникяну защищать точку зрения ЦК КПА на указанные вопросы <на заседании> Кавбюро ЦК РКП.

Секретарь Г. Азатьян

НАА, ф. 1, оп. 1, д. 40, л. 12. Подлинник. Машинопись.

№ 3
ВЫПИСКА ИЗ ПРОТОКОЛА № 12
ЗАСЕДАНИЯ ЦЕНТРАЛЬНОГО КОМИТЕТА

27. 06. 1921 г.
Ереван

Слушали

3. О Закавказской железнодорожной конференции в Тифлисе.

Постановили

3. Сообщить А. Бекзадяну и А. Шавердову принять участие в работе конференции от Экономического совета Армении.

Секретарь Г. Азатьян

НАА, ф. 1, оп. 1, д. 40, л. 21. Подлинник. Машинопись.

№ 4
ՔԱՂՎԱԾՔ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԻՍՏԻ № 15 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

19. 07. 1921 թ.
Երևան

Լսեցին

1. Ընկեր Ղազարյանի նշանակումի մասին արտ[աքին] առևտրի Անդրկով[կասի] միացեալ մարմնի մէջ

2. Մէր դիրքը դէպի միացեալ արտ[աքին] առևտրի մարմինը

Որոշեցին

